

Մ. Խ. ԴԱՐՎԵՇՅԱՆ

ՆԱԽԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐԻ ՄԵՋ

Ժողովրդի ավանդութային հարսանեկան ծիսակարգը, որով վա-
վերացվում էր ամուսնությունը, ստորաբաժանվում է երեք հիմնական
փուլի՝ նախահարսանեկան (ընտրություն, խոսք առնել, նշանադու-
թյուն), բուն հարսանյաց հանդես և հետհարսանեկան (ամուսնական-
կյանքի առաջին շաբաթները)։ Այս երևույթները ընդհանուր առմամբ
քննվել են քրդերի ազգագրությանը նվիրված Ա. Ավդալի¹, Տ. Արիստո-
վայի² և այլոց աշխատություններում. սակայն երիտասարդ աղջիկնե-
րի ու տղաների նախամուսնական ընտրության պայմանների ու ձևերի
հետ առնչվող հարցերը առաջին անգամ հատուկ ուսումնասիրության
առարկա են դառնում ներկա հոդվածում³։

Նախամուսնական փուլի էությունը քրդերի մեջ պատկերացնելու
համար ընդգծենք, որ քրդուհին, ի տարբերություն մահմեդական աշ-
խարհի մյուս կանանց, երեք չի ծածկել դեմքը, խոսել է ազատ, շփվել,
հաղորդակցվել տղամարդկանց հետ⁴։ Քրդուհիններն ակտիվ մասնակցու-
թյուն են ունեցել հասարակական հավաքույթներին, տոնախմբույթու-
ներին, մինչև անգամ ստանձնել պատերազմի դաշտում զոհված սիրելի
ամուսնու վրեժի լուծումը⁵։

Նախամուսնական փուլում երիտասարդ տղաների ու աղջիկների ծա-
նոթանալուն, մերձեցմանն ու իրար ավելի մոտիկից ճանաչելուն մեծա-
պես նպաստել է առօրյա աշխատանքներին, հարսանեկան և թաղման
արարողություններին, տոնահանդեսներին և բազմաթիվ այլ հավաքույթ-
ներին համատեղ մասնակցությունը։

Հարսանիքատեղին յուրատեսակ միջավայր է եղել, ուր հրավիրվել

են հասարակութեան տարբեր սեռատարիքային խմբերի ներկայացուցիչներ, որոնցից յուրաքանչյուրը ունեցել է պարկեշտ լինելու, էթիկայի նորմերը պահպանելու պատասխանատվության խոր զգացում: Ուշադրության կենտրոնում են եղել հատկապես շաժուսնացած աղջիկները, որոնք ներկայանում էին ընտիր հագուստով, ժողովրդական հարդարանքով, որպեսզի լավ երևային հասարակութեան աչքին: Երիտասարդները ուշի-ուշով հետևել են ամեն մի աղջկա շարժումներին, պարելուն, երգելուն: Մայրերը հպարտութեան զգացում են ապրել, տեսնելով իրենց աղջիկների աչքի ընկնելը, իսկ մյուս կանայք այդ ընթացքում ընտրում էին իրենց ապագա հարսին: Երիտասարդներն էլ իրենց հերթին են կատարել աղջկա ընտրությունը, որից հետո փնտրել իրենց զգացումն ընտրյալին հաղորդելու առիթներ ու միջոցներ:

Տղաների ու աղջիկների համատեղ ժամանցի, շփման ու մերձեցման և միմյանց ի մոտո ճանաչելու ամենապատեհ միջոցը քրդական իրականության մեջ լայնորեն հայտնի Բնդարուկի ավանդական սովորույթն է եղել, որ երիտասարդ աղջիկների ու տղաների համատեղ տոնախմբության մի ձև էր: Այն կատարվել է գարնան և ամռան ամիսներին, մասնակցել են նաև նորահարսներն ու կանայք: Սովորաբար հավաքվել են որևէ ծառի տակ (բնդարուկ բառացի նշանակում է ծառի տակ, կամ շուրջ հավաքվել): Նման հավաքույթներ անցկացվել են նաև քարանձավներում, կիրճերում, մարգագետիններում, աղբյուրների մոտ, առվակների ափին, որը նույնպես բնդարուկ է կոչվել: Բնդարուկը քրդերի մեջ գոյություն է ունեցել վաղուց ի վեր:

Դաշտային ազգագրական նյութերից զատ այս բանը հաստատվում է նաև գրավոր աղբյուրների վկայությամբ: Այսպես, քրդական ազգային սովորույթներին, նիստ ու կացին քաջատեղյակ Մելա Մահմուդ Բայազիդին հավաստում է, որ զոմայում (ամառանոց) երեկոյան պատանիները հավաքվում էին վրանների շուրջը և գնդակ խաղում կամ ձիարշավ կազմակերպում, ծերունիներն էլ դիտում էին այդ ամենը: Իսկ աղջիկները, հարսներն ու երիտասարդ կանայք մոտիկ դարուկում (որ է՝ բլնդարուկ) իլիկ էին մանում: Իսկ ուշ երեկոյից մինչև լուսաբաց երիտասարդ կանայք ու տղամարդիկ միասին երգում-պարում էին⁶:

Շուրջ մեկ դար անց, հայտնի քրդագետ Ս. Նդիազարովը գրում է, թե քոչավայրերում աղջիկները հավաքվում էին առվակների մոտ, անձավներում և զովասում պուրակներում և նման հավաքատեղիները բլնդարուկ էին կոչվում⁷:

«Մամե և Զինե» քրդական սիրավեպում հիշատակվող Զգիրա Բոհթան քաղաքի հարավային մասում գտնվող աղբյուրը, որի շուրջ դրոսներու էին գալիս աղջիկներն ու նորահարսները և երգում, պարում էին⁸, հավանաբար նույնպես բնդարուկի նման հավաքատեղի է եղել:

Ալդորինակ տեղեկություններ կան նաև հանրահայտ «Շիրին և Խոսրով» սիրավեպում, որը լայնորեն տարածված է նաև քրդերի մեջ: Այստեղ ասվում է, որ Շիրինը ընկերուհիների հետ գնացել է բնդարուկ, Խոսրովն ու Ֆահրադը որսորդությունից վերադառնալով տեսնում են աղջիկներին ու հարսներին բնդարուկում և այստեղ երկուսն էլ սիրահարվում են Շիրինին⁹:

Ա. Շամիրովը գրում է, որ Սիփան սարի ստորոտում գտնվող Բոստան Ղայա գյուղի բնակիչները պատմում են, թե իբր Խաչեն և Սիրաբանդը գնացել են բնդարուկ, ուր և սիրահարվել են¹⁰:

Հայաստանի և Թուրքիայի սահմանամերձ շրջանում կառուցվող արհեստական լճի շինարարությունում աշխատող Հասանե Ղարոն (սովետական կողմից) Թուրքիայի քրդերից իմացել էր, որ նրանց մեջ ևս գոյություն ունի վերը հիշատակված վայրերում աղջիկների ու տղաների մի հավաքատեղ, որ նույնպես կոչվում է բնդարուկ¹¹: Գրեթե նույն միտքն է հաղորդում վերջերս Թուրքիայի Քավարլու գյուղից հայրենադարձված Հակոբ Կիրակոսյանը¹²:

Նվ վերջապես՝ բնդարուկի, նրա տարածվածության խոստովարտահայտությունն են մեր հավաքած բանահյուսական նյութերում հանդիպող հետևյալ դարձվածքներն ու արտահայտությունները՝ „Қиз буке мә һәв гьртһә чунә бьндаруке; к'әсәк т'әһә һәр'ә бәр пез; зә, вае бьндаруке; қйз-бук ль бьндаруке тен; қиз-бука т'әши у-көлие хwә һьлдан чунә бьндаруке“.

(«Մեր աղջիկները խմբվել, գնացել են բնդարուկ, չկա մեկը, որ գնա ոչխարի ետևից», «Բնդարուկի փեսա», «Հարսներն ու աղջիկները վերադառնում են բնդարուկից»):

Վաղամեծիկ հարսի գովքն անելիս սգո երգերից մեկում հիշվում է, որ նա հարսների ու աղջիկների հետ պետք է գնար բնդարուկ:

Буке готә ве хасие,
Го бьдә мьн т'әшие, ве көлие,
Әзе лә'зәке т'әв қиз у бука
Һәр'әмә ль ве бьндаруке

Հարսը ասաց կեսուրին
Տուր ինձ իլիկ՝ մի փաթիլ բուրդ
Հարս-աղջիկների հետ միասին
Ես էլ գնամ բնդարուկ¹³:

Բնդարուկի մասնակիցների սեռային կազմը ոչ բոլոր ազգակցական խմբերում է համատարր եղել: Որոշ խմբերում բնդարուկին մաս-

նակցել են միայն աղջիկներն ու նորահարսները, որը վկայվում է մասնավորապես Արարատի և Մասիսի շրջանների մասնագրական քրդերից գրառված նյութերով: Վկայված է նաև, որ բնդարուկի գնացել են երեմն նաև պատանիները, որոնք աղջիկներից քիչ հեռու կազմել են հավաքույթ և թթի երեխաներ շեն եղել (որոնք կարող էին հայտնել ծնողներին), միացել են աղջիկների խմբին և սիրատարի երգեր են երգել¹⁴: Նույն կերպ է եղել նաև Ռամոշիա եզդիական ազգակցական խմբում: Այսուհանդերձ, որպես ընդհանուր կանոն քրդական ազգակցական խմբերի մեծ մասում բնդարուկին մասնակցել են գրեթե առանց բացառության երկու սեռի երիտասարդ ներկայացուցիչները: Այդ են վկայում նաև ներքոհիշյալ արտահայտությունները: Բնդարուկի փեսա («Зә'бе (зә'вае) бәндаруке»), այսինքն՝ բնդարուկային ընտրությամբ ամուսնացած փեսա արտահայտությունը տարածված է եղել եզդիական Զուրիա ազգակցական խմբի ու Թուրքիայի եզդիների մեջ¹⁵:

Մնողները բնդարուկին մասնակցած տղաներին հարցրել են («Տղա, դու շնո գնալու բնդարուկ», «Դուք որտե՞ղ եք հավաքվելու բնդարուկի», «Այ տղա, ոչ մի աղջիկ չհավանեցի՞ր բնդարուկում»):

Հաճախ համատեղ բնդարուկի են գնացել հարևանությամբ ժամանակավոր քոչավայր ընտրած օբյեկտների միավորումների մեջ մտնող ընտանիքների երիտասարդ աղջիկներն ու տղաները: Դա նպաստել է բարեկամական-խնամիական կապերի շրջանակների ընդարձակմանը՝ ի հաշիվ ազգակցական խմբից դուրս ամուսնությունների:

Բնդարուկին մասնակցողը հետը տարել է որևէ մթերք՝ յուղ, ալյուր, պանիր, բրինձ, ձավար, շաքար, ձու, միս, նաև մրգեղեն: Հավաքավայրում պատրաստել են ձվածեղ, փլավ, հալվա, խավիթ, խորոված և այլն¹⁶:

Հավաքավայրում կատարվել է աշխատանքի բաժանում, աղջիկներից ոմանք պատրաստել են ճաշեր, ոմանք էլ ցան, ցախ հավաքել, մյուսները մաքրել, հարդարել են այն տեղը, ուր պետք է անց կացվեր բնդարուկը: Աղջիկները նաև մանել են տնից բերած բուրդը, մինչև անգամ գործել գուլպա, ձեռնոց, պարան, գոտի և այլն:

Բնդարուկի մասնակից նորահարսներն ու աղջիկները հագնվել են տոնականորեն, պնձվել ոսկեղեն, արծաթեղեն զարդերով, ծարիրել են աչքն ու ունքը¹⁷:

Երիտասարդները երեմն բնդարուկի են հրավիրել նվագողների¹⁸, երգել, պարել են գրեթե ամբողջ օրը: Շուրջպարի մի կողմը նորահարս-

ներն ու աղջիկներն են բռնել, մյուս կողմը՝ տղաները ու ձայնակցել միմյանց:

Դա հանպատրաստից բազմաբնույթ, բայց հիմնականում սիրային երգեր հորինելու մի մրցույթ է եղել, արել են միմյանց գովքը, ցուցադրել իրենց շնորհքը¹⁹:

«Բնդարուկը, ինչպես հայկական համբարձման օրը հայ աղջիկների համար, քրդուհիների համար բախտ բանալու օր էր համարվում»,— գրում է Ա. Ավդալը: Այնուհետև հեղինակը նկարագրում է, թե բնդարուկում ինչպես էր կատարվում աղջիկների բախտի գուշակումը: Ում բախտը չէր բերում, վատ տրամադրությամբ տուն էր վերադառնում, իսկ բախտ ունեցողները շարունակում էին ուրախությունը²⁰:

Բնդարուկի օրերին աղջիկներն ու նորահարսները փոքր քարերից հյուղակներ (H'OLBK) են շինել²¹: Նմանատիպ «կառույցների» առկայությունը բնդարուկային ծիսաշարում հնարավորություն է տալիս բացահայտելու հետաքրքիր մի երևույթ: Շատ հաճախ իրենց տղաների համար աղջիկ ընտրելու նպատակով բնդարուկ եկած կանայք մոտենալով աղջիկներին և առաջարկելով միրգ, շաքար, յուղ, պանիր, զանազան նվերներ (գլխաշոր, թաշկինակ, հայելի, սանր), փոխարենը պահանջում էին ստանալ հյուղակները: Աղջիկները կտրուկ հրաժարվում էին նման փոխանակումից, պատճառաբանելով, թե հյուղակները Բալուկի Զանային են²² (իբր նա է հովանավորողը—Մ. Դ.), ուստի իրենք այդ իրավունքը չունեն²³:

Միսական նմանօրինակ երևույթի խորհրդաբանությունը կարող է բացատրվել երկակի: Ամենից առաջ, դա աղջկան հավանելու և նրան իր հարսը դարձնելու ցանկությունն ակնարկող սիմվոլիկ միջոց էր բնդարուկ այցելած կանանց համար: Դրա վկայությունն է նաև այն փաստը, որ բնդարուկյան հյուղակները, Բալուկի Զանային պատկանելուց դատ, համարվում էին նաև «ամուսնական տուն ու տեղ»: Հետևաբար ենթադրվում էր, որ որևէ հյուղակ ձեռք բերելով, կինը իր տղային «ամուսնացնում է» հյուղակի տեղ հանդիսացող աղջկա հետ: Մյուս կողմից էլ՝ հյուղակը չփոխանակելը բացատրվում է այն բանով, որ եթե կանայք ձեռք բերեին այն, զոհաբերություն կատարած կլինեին և ապահոված իրենց տեղը դրախտում՝ անդրշիրիմյան աշխարհում:

Բալուկի Զանային ընդունելով որպես իմաստուն հովանավոր և հետևելով նրա խորհրդին, աղջիկները ոչ մի կերպ չէին զիջում իրենց շինած հյուղակները, քանի որ դրանք ամուսնական տուն ու տե-

դըն էին և հանդերձյալ կյանքում դրախտում տեղ ապահովելու խորհրդանիշ:

Ինչ վերաբերում է բնդարուկում պատրաստվող ճաշերին, ապա դրանք յուրօրինակ զոհաբերություն էին, ի թիվս այլ ոգիների, նաև Բալուկի Զանային՝ որպես հյուղակը հովանավորողի, նորահարսների ու աղջիկների խորհրդատուի, իմաստուն մարդ-սրբազործվածի պատվին:

Ուշագրավ է բնդարուկում անցկացվող մի այլ արարողություն ևս. դա «հարս ու փեսայի խաղն է»:

Քրդական իրականությունում տարածված երևույթ է այն, որ բնդարուկում հաճախ որևէ տղայի ու աղջկա ընտրել են որպես «հարս ու փեսա», զարդարել, դհուլ-զուռնայի նվագի, երգի ու պարի բացականչությունների տակ անցկացրել զույգի հարսանիքը, բայց այդ ամենը խաղի ձևով: Այս խաղը միտված է եղել տղաների ու աղջիկների ներկայությամբ ցուցադրելու այն հարսանիքը, որին շուտ թե ուշ արժանանալու էին իրենք, որպեսզի նրանք վարժվեն հարսանեկան հանդեսի ծիսակարգին:

Մասնակիցները բնդարուկից երգ ու պարով, ուրախ տրամադրությամբ երեկոյան մայրամուտին վերադառնում էին իրենց բնակավայրը²⁴: Բնակիչները դիմավորում էին բնդարուկից վերադարձող երիտասարդներին, որոնք գլխներին ունեին երփներանգ ծաղկեպսակներ, ձեռքերին՝ ծաղկեփնջեր, ունկնդրում նրանց երգն ու պարը: Շատ հաճախ բնդարուկից վերադարձող խմբին միանում էր որևէ ծերունի և մտնելով պարի մեջ, պարբաշի էր դառնում, իր կատակներով և սրամտությամբ աշխուժություն առաջացնելով հանդիսականների մեջ: Երբեմն պարի մեջ էր մտնում հավաքված ողջ բաղմությունը, դրանով նոր լիցք հաղորդելով երիտասարդների ուրախությանը:

Այստեղ ևս, ինչպես նկատել են ուսումնասիրողները, ծնողների համար հնարավորություն էր ստեղծվում իրենց զավակների համար ապագա հարսնացու կամ փեսացու ընտրելու²⁵: Բնդարուկի ծիսակարգը սրանով ավարտվում է: Ինչպես ասվեց սկզբում, բնդարուկի, որպես կարևոր սովորույթի վրա ցարդ պատշաճ ուշադրություն չի դարձվել: Մինչդեռ այն հույժ ուշագրավ է, քանի որ, ըստ երևույթին, հնագույն ավանդական ինստիտուտի՝ նվիրագործման ծեսի հետագա դարաշրջանում ինչ-որ չափով փոփոխություններ կրած, սակայն համեմատաբար ամբողջական կերպով ընդհուպ մինչև մեր օրերը հասած վերապրուկի բնորոշ արտահայտություն է, կարոտ առավել բաղմակողմանի ու խորագնին ուսումնասիրության:

Բնդարուկից բացի՝ կյանքի ապագա ընկերոջ (ընկերուհու) ընտրության այլ հնարավորություններ էլ են եղել քրդերի մեջ: Դրանք, ինչպես ասվեց, ավանդական դարձած ծեսերն ու տոնախմբություններն են, որոնց ընթացքում բոլոր մասնակիցների միջև ստեղծվում էին համեմատաբար անկաշկանդ, սակայն որոշակի ծիսակարգով շափաձևված հաղորդակցության պայմաններ: Այդ առումով բնորոշ է նավրոզի տոնախմբությունը²⁶:

XVII դարի քուրդ պոետ Ահմադե խանին «Մամ և Զին» պոեմում անդրադառնալով նավրոզի տոնակատարությանը, մասնավորապես հիշատակում է, որ տոնականորեն հագնված ու զուգված տղաներն ու աղջիկներն այդ հանդեսի ժամանակ զբոսնում էին դաշտերում, նշանավոր հավաքույթի տեղերում, ուր՝ երգում, պարում, ուրախանում էին սիրող զույգերը²⁷:

Այդ տոներին մարդիկ, ըստ որում նաև երիտասարդները, իրար տներ այցելելով, շնորհավորում էին միմյանց:

Հավաքույթներ էին լինում նաև առանձին տներում: Այս կապակցությամբ արժանահավատ տեղեկություններ է հաղորդում Մելա Մահմուդ Բայազիդին. «Երեկոյան հրավիրվում են բոլոր ազաբ երիտասարդները՝ տղաներն ու աղջիկները, հարսներն ու կանայք: Դատարկում են մի մեծ շինություն, վառում մոմեր և հրավիրում երգասացների ու երաժիշտների: Նվ թաղի կամ գյուղի ամբողջ երիտասարդությունը այդ երեկո հավաքվում է այդ տանը: Նվագում են թառ, պարում, կատարում խմբային երգեր մինչև առավոտ, որից հետո բոլորը ցրվում են իրենց տները»²⁸:

Քրդական ազգակցական շատ խմբերի մեջ աղջիկ փնտրելու պատրվակով (եթե այդպիսին չկար շրջապատում կամ ազգականների մեջ) տղան այցելում էր հարազատներին (եթե դրանք ապրում էին իրենցից հեռու) և մի քանի օր մնալուց հետո վերադառնում էր տուն և հատկապես քույրերի, մտերիմ ընկերների միջոցով հասկացնել տալիս, որ հավանել, գտել է իր աղջկան: Քույրերը լուրը հայտնում էին մորը, նա էլ՝ ամուսնուն և սկսվում էր աղջկա մասին հարց ու փորձը: Երկուստեք համաձայնության գալուց հետո, արվում էր նշանի արարողությունը²⁹:

Մանթեթանլը, ընտրություն կատարելը տեղի էր ունենում նաև բերատեղում (կթի տեղում), աղբյուրների մոտ: Աղբյուրները երբեմն գտնվում էին բնակավայրերից ու քոչավայրերից բավական հեռու: Երիտասարդ տղաներն անասուններին ջրի տանելիս հանդիպում էին ջրի եկած աղջիկներին, խոսքեր փոխանակում նրանց հետ, զգացնելով ի-

թենց վերաբերմունքը: Նման ակնթարթային հանդիպումները հասարակության կողմից անտեսվում էին, բամբասանքի տեղիք չէին տալիս, դժբանք դիտվելով որպես ոչ կանխամտածված, հանգամանքների բերման արդյունք:

Նախամուսնական ընտրության դրսևորումներից է Թուրքիայի քրդերի (եզդիների) մեջ պահպանված հետևյալ ուշագրավ սովորույթը: Ծննդալից համակրող երիտասարդը համառ հետապնդումների ընթացքում կարողանար բռնել աղջկա ձեռքն այնպես, որ որևէ մեկը նկատեր, այդ օրվանից աղջկա նկատմամբ մի այլ տղա որևէ նկրտում չէր կարող ունենալ: Հակառակ դեպքում հանդես էր գալիս վկան և հաստատում ձեռքը բռնելու փաստը: Վկան էր հարցը որոշում նաև այն դեպքում, երբ աղջկա ծնողները փորձեին դեմ կանգնելու այդ ամուսնությանը: Իսկ եթե նրանք իրենց աղջկան տալին այլ տղայի (որը հազվադեպ է եղել), ապա այդ (այսինքն՝ ձեռքը բռնած տղայի և աղջկա) ընտանիքների միջև թշնամություն էր առաջանում³⁰:

Ձեռքը բռնելով, որևէ այլ կարգի հպումով կամ անմիջական շփման միջոցով որևէ մեկին յուրային դարձնելու գաղափարը հայտնի է կովկասյան շատ ժողովուրդների: Որոշ տեղերում դա այնքան սրբազործված գործողություն էր համարվում, որ նույնիսկ կանխում էր արյան վրեժի սովորույթը³¹:

Անդրկովկասի քրդերի մեջ գործող նման սովորույթի շնք հանդիպում, սակայն ուշագրավ է, որ նշանդրեքից հետո զանազան արտահայտությունների (հոմանիշների) կողքին նաև ասվում էր «ДѢСТГЬРТИА МЪН, ДѢСТГЬРТИЕ МЪН», բառացի՝ իմ ձեռքը բռնողը, այսինքն՝ օրինական նշանածը: Իրանի քրդերը տղայի համար աղջիկ ուզելու, նշանելու նրպատակով աղջկա հորից խնդրում են աղջկա ձեռքը³²: Նման երևույթի տարբեր դրսևորումներ եղել են շատ ժողովուրդների, այդ թվում հարևան հայերի մեջ ևս: Այսպես, հայերի ազգագրական շատ շրջաններում նույն նպատակով գնացած ազգականները աղջկա ծնողներից խնդրել են նրա ձեռքը:

Քրդերը մեծ կարևորություն են տվել այնպիսի երևույթների, որոնք, չստ իրենց պատկերացման, ճակատագրական են եղել մարդու կյանքում: Նրանք սովորաբար «բախտի ու երազի» հետ էին կապում իրենց ցանկությունների, իղձերի իրականացումը: Նրիտասարդ տղաներն ու աղջիկները հավատում էին, թե «բախտը և երազը» միջնորդի դեր են կատարում, ուստի ապավինում էին նրանց զորությունը: Մեկա Մահմուդ Բա-

յազիրդին գրում է, որ քրդերը շատ են մեծարում բախտը³³։ Աղջիկ ընտրելու, սիրահարվելու, ամուսնանալու հաջողությունը դարձյալ կապում էին բախտի հետ։ Քրդերը բախտով երգվում էին, բարեմաղթություն անում³⁴։

Ժողովրդական տոնախմբության (Այդա խրդնաբի) նախօրյակին թխվում էին աղի բլիթներ (ТОТКА ШОР), երիտասարդ տղաներն ու աղջիկներն իրենց բախտը գուշակելու ակնկալությամբ երեկոյան ուտում էին այն ու պառկում քնելու։ Տոնի նախօրյակին, այսինքն՝ պասի³⁵ վերջին օրը (ըստ քրդերի այս օրը մուրազի, բախտի օր է) նրանք պետք է ծոմ պահեին, այլապես կխափանվեր երազը, սպասումներն ի դերն կենեին։ Աղի բլիթ ուտողին գիշերը երազում ով ջուր տար կամ երևաբաշին, կլիներ իր ընտրյալը։

Երիտասարդներն աղի բլիթ ուտելուց առաջ օրհնում էին տոները հովանավորող հրեշտակներին (խրդնաբի կամ խրդնաբի և էզդիի) ասելով. «Хьдрнэби Хьрдлиазе кал тō мьраз бахши, тō мьразе мэ быгһини, мэ быгһини мьраза, йэкә п'ак бьки қысмәте мэ, гōмана мэ тōи, гәло к'е we аве бьдә мэ, йа эздиде сор, мэ быгһини мьраза, мразе мэ» (խրդնաբի, դու մուրազաբաշ (մուրազատու) ես, դու մեզ հասցնես մեր մուրազին, դու մեզ բախտավորեցնես, հարմար մեկին ընտրես մեզ համար, մեր հույս ու հավատը դու ես, արդյոք ո՞վ պետք է մեզ ջուր տա, ով էզդի, մեզ հասցնես մեր մուրազին)։

Ասացողները հաստատում են, որ, օրինակ, աղի բլիթ ուտելու գիշերը երազում օձերի շրջապատման մեջ են ընկել, ինչ-որ մեկը մոտեցել է և ասել. «Եթե քեզ փրկեմ, ինձ կին կդարձնե՞ս»³⁶, կամ՝ ընկել են գայլերի ոհմակի մեջ և այդ պահին անծանոթ մի աղջիկ մոտեցել է ու հրաշքով փրկել։ Հետագայում պարզվել է, որ փրկողը այն աղջիկն է եղել, որը դարձել է իր կինը։ Իսկ երազում սպիտակ ձի տեսնելը մուրազին հասնել էր նշանակում։

Տոնի հաջորդ օրը, երբ արդեն հայտնի էին դառնում երազում ջուր տվողները, ջանում էին դարձնել իրենց նշանածը և ոչ քիչ դեպքերում, նրանք իսկապես ամուսնանում էին, հասնելով իրենց փափագին։

Հիշյալ տոներին երիտասարդ տղաներն ու աղջիկները հացի կամ աղի բլիթի մի կտոր վաղ առավոտյան դնում էին տան կսուրին, խոտի դեզին կամ ամթարի ամրոցին և ուշագիր հետևում, թե թռչունները որ կողմի վրա են տանելու այն, որով հայտնի էր դառնում, թե որ կողմից էր հայտնվելու կյանքի ապագա ընկերը։

Նույնանման սովորույթի մասին վկայություններ կան նաև Վարանգայի հայերի մեջ³⁷:

Բախտը գուշակելու մի այլ հետաքրքիր սովորույթ է եղել այն, որ խոյերին ոչխարների մեջ բաց թողնելու ավանդական տոնակատարության ժամանակ երիտասարդ աղջիկները իրենց բախտը փորձելու ակնկալիքով խոյերի պարանոցին թաքուն կապում էին իրենց գլխաշորը (փուշիները): Հավաքված երիտասարդներից ով փուշին արձակեր, նա էլ լինելու էր աղջկա ապագա ամուսինը: Երբեմն ծնողները համաձայնության էին գալիս և պսակադրում³⁸:

Հարսնացու ընտրելու հարցով մտահոգվում էին տղայի գրեթե բոլոր հարազատները: Հատկապես մայրը մասնակցելով հարսանեկան, թաղման արարողություններին ու կանանց հավաքույթներին, ուշադրության կենտրոնում էր պահում աղջիկներին, զննում նրանց ամեն մի քայլափոխում: Ընտրություն անելուց հետո խոսում էին նրա հետ, ապա հարց ու փորձով ստուգում աղջկա ինչպիսի ընտանիքից լինելը (եթե նախօրոք չէին ճանաչում), որից հետո միայն նախապատրաստվում էին նրան ուզելու համարձակ քայլն անել:

Ամուսնության տարիքի տղա ունեցող ծնողներն ու հարազատներն ամեն պատեհ առիթով հետաքրքրվում էին հարմար հարսնացու ընտրելու հարցով: Եթե մատնացույց էին անում որևէ աղջկա, ապա առաջին հերթին հետաքրքրվում էին այն բանով, թե ինչպիսին է նրա մայրը, որպես կին, հատկապես՝ տանտիկին: Մոր հատկանիշներով որոշում էին աղջկա արժանիքները: (Ի դեպ, տղայի արժանիքներն էլ որոշում էին հորով):

Փեսայության հավակնորդ տղայի մայրը երբեմն աղջիկ էր փրնտրում աղբյուրի մոտ, նաև բաղնիքում (Իրանի Քուրդստանում) կամ այլ վայրերում, ուր հավաքվում էին կանայք³⁹: Բաղնիքում կանայք հրեարավորություն ունեին աղջկա հետ խոսելու, նրա մարմնական բարեմասնությունները տեսնելու⁴⁰:

Տղաները աղջիկներին հանդիպում էին կոլեկտիվ աշխատանքի՝ զբարայի (збарѣ⁴¹), բանջարի, լվացքի գնալու ժամանակ⁴²: Այդ աշխատանքների կատարման ընթացքում աղջիկներն իրենց սրտի հույզերն ու գաղտնիքները հայտնում էին մտերիմ ընկերուհիներին, որոնցից միջնորդ էին ընտրում, որի միջոցով հարաբերակցվում էին իրենց ընտրյալի հետ:

Միջնորդները նաև փոխանցում էին նվերներ (թաշկինակ, հայելի և

այլն), որոնք պահում էին ամբողջ կյանքի ընթացքում որպես սուրբ մասունք, սիրո հավատարմության խորհրդանիշ:

Սիրահարվածները երբեմն հանդիպում էին, բայց դա կրում էր ակրնթարթային բնույթ, հազիվ մեկ-երկու բառ էին փոխանակում: Բացառություն էին կազմում աղբյուրների մոտ տեղի ունեցած հանդիպումները⁴³:

Միայնակ հանդիպումները լինում էին գաղտնի, սիրահարվածները, մանավանդ աղջիկները, զուսպ էին սիրո զգացմունքների դրսևորման հարցում: Հաշվի էին առնում հասարակության կարծիքը, ծնողների պատիվը, որոշ դեպքերում նրանց ահը:

Քրդական իրականությունում բացառիկ եզակի երևույթ են եղել մինչամուսնական հղիության դեպքերը: Նման բան դիտվելիս աղջկա կողմի կանայք (գաղտնի պահելով այն տղամարդկանցից) միջոցների էին դիմում վիժեցնելու պտուղը կամ տղայի կողմին հայտնելով, շուտափույթ կազմակերպում էին հարսանիքը, երբեմն էլ հարկադրում տղային կնության առնել հղի աղջկան:

Քրդական իրականությանը հայտնի են անաղարտ սիրո շատ ու շատ դեպքեր, որոնց շուրջը հյուսվել են սիրավեպեր: Հիշենք թեկուզ հանրահայտ «Մամե ու Զինե», «Խաջեզարե և Միամանթո», «Մամե և Այշե»⁴⁴ և այլն: Այդ սիրավեպերի հերոսները ոչ միայն պայքարում էին ավանդութային կաշկանդիչ օրենքների դեմ, այլև զոհաբերում իրենց կյանքը հանուն սիրո հավատարմության ու երգման⁴⁵:

Դարերի խորքից եկող սոցիալական անհավասարությունն ու հակամարտությունը միշտ էլ խանգարում էր, արգելում նյութական անհավասար վիճակ ունեցող երիտասարդ տղաների ու աղջիկների ամուսնությունը: Չնայած դրան, սիրահարված զույգերը հաճախ հաստատակամություն էին հանդես բերում և ծնողների կամքին հակառակ ամուսնանում: Այդ ամենը ցայտուն արտահայտություն է գտել քրդական բանահյուսության տարրեր ժանրերում:

Սոցիալական անհավասարության հետ միասին դավանանքային տարբերությունները նույնպես խանգարող պատճառ էին սիրահարված զույգերի ամուսնությունը: Հայտնի է, որ քուրդ ժողովրդի կրոնական երկու խմբերի՝ մահմեդականների ու եզդիների միջև արգելված էր ամուսնությունը:

Այս առումով ուշագրավ է Ա. Ժաբայի արխիվային հավաքածուում հայտնաբերված երգի հակիրճ տեքստը, որ տարածված է եղել Ալաշ-կերտի, Բայազեդի, Կարսի աղջիկների մեջ: Այդ երգում պարզ արտա-

հայտնված է կրոնի խանգարիչ դերը երգի հերոս, սիրահարված երիտասարդ մահամեղական քրդի և եզդուհու ամուսնության հարցում: Ըստ որում տղան Բայազեդի կառավարին է եղել, աղջիկը՝ աղքատ ընտանիքից⁴⁶:

Սոցիալական անհավասարության բացահայտ երևույթներ են նկատվում „Кэвре хwəзгиние, к'əрсие хwəзгиние“ ուզբեկների քարին առնչվող սովորությունում: Ըստ բանահյուսական աղբյուրի ուզբեկների քարը դրված էր հարուստի, թագավորի դռան առջև, բակում կամ բնակավայրի մոտ: Այդ քարին նստողը հասկանալի է, որ եկել էր աղջիկ ուզելու ոչ թե աղքատ, այլ հարուստ ընտանիքից: Քարին նստելու պատիվը նույնպես պատկանել է հարուստին: Իսկ եթե աղքատը նստեր քարին, նրան առաջադրվում էր որոշակի նախապայման⁴⁷:

Սիրո անկեղծ խոստովանություն, իրար հետ հաստատ ամուսնանալու երաշխիք էր քրդական բանահյուսությունից քաջ հայտնի սիրավեպերի հերոսների՝ Մամեի և Զինեի, Սևա Հաջիի և Միր Մահմուդի երազներում մատանիների փոխանակումը, որպես սիրո հավատարմության սիմվոլ⁴⁸:

Մեռողների միջև ծագած վրեժխնդրությունը, թշնամությունը խիստ անդրադառնում էր երիտասարդների փոխհարաբերությունների վրա, որպիսի պայմաններում նույնիսկ, շնայած խիստ արգելքներին, նրանք իրար հետ հաղորդակցվելու, շփվելու հնարավորություններ էին գտնում և չէին բացառվում թշնամի կողմերի տղայի և աղջկա սիրահարվելու և ամուսնանալու դեպքերը: Ի դեպ, նման ամուսնության մեկընդմիջտ վերջ էր տրվում ծնողների ու ազգակիցների վրեժխնդրությանը:

Եվ ընդհակառակը, երբ ծնողները ինչ-ինչ պատճառներով արգելքներ էին հարուցում միմյանց սիրող երիտասարդ զույգերի ամուսնության գործում, հաճախ երիտասարդ զույգերը ինքնուրույն որոշում էին իրենց ամուսնության խնդիրը՝ փախչելով և ապաստան գտնելով որևէ ծանոթի հարկի տակ: Նման հանգամանքները, բնականաբար, ավելի էին խորացնում թշնամանքը ամուսնացողների ազգականների միջև, որը շարունակվում էր մինչև „П'əВКəТЬН“) փոխադարձ հաշտեցում⁴⁹:

Երիտասարդ աղջիկներն ու տղաները լավ բախտի արժանանալու փափագին ու սիրածին հասնելու ակնկալությամբ հաճախ դիմում էին բազմազան միջոցների, այդ թվում նաև սրբերի, գրքացների (К'əФəК), որպես միջնորդ հովանավորի օգնության⁵⁰:

Քրդերի հավատալիքների համակարգում զգալի տեղ էր բռնում ծառերի պաշտամունքը: Ուխտավորները ծառերից կախում էին գույնզգույն լաթեր: Ուխտավորներից յուրաքանչյուրը, նաև ամուրի երիտասարդները, ունենում էին մի իղձ: Ուխտավայրում երիտասարդները երգում, պարում, ուրախանում էին դհուլ-զուռնայի նվագակցությամբ, որը ևս սրբերին սիրաշահելու յուրօրինակ զոհաբերական ծես էր: Այստեղ ևս տղաներն ու աղջիկները սիրո զգացմունքների պահեր էին ապրում, ուխտավայրը դառնում էր նրանց սիրո հավատարմության միջնորդը, վկան: Եթե նրանցից մեկն ու մեկը այստեղ սիրո խոսք էր արտահայտում կամ ուխտում էին իրար հետ ամուսնանալ, այլևս չէին կարող հրաժարվել իրենց խոսքից, մանավանդ, որ դա դաշտավայրում էր տեղի ունեցել՝ սրբերից ու տրված խոսքից բարձր ինչ կարող էր լինել:

Քրդուհին սիրած տղային տրված խոսքի տերն էր և երբեք չէր խախտում պայմանը: Հաճախ նա երգվում էր սրբավայրով, հոգևորականների օջախներով, նախնիների ու նահատակների շիրիմներով և երբեք չէր դրժում երգումը: Սիրո երգմանը հավատարիմ մնալու բազմաթիվ օրինակներ կարելի է բերել քրդական իրականությունից, թեկուզ հենց Խաչեղարեի ու Սիաբանդի հանրահայտ օրինակը:

Եթե տղան սիրահարված էր մի աղջկա, բայց նրանց ամուսնությունը խանգարող հանգամանքներ կային (վրեժխնդրություն, սոցիալական անհավասարություն, նույնի նկատմամբ մեկ ուրիշ տղայի համակրանքը, աղջկա ծնողների չհամաձայնելը), ապա տղայի մայրը կամ միջնորդ կանայք ջանում էին անպայման դիմել, այն էլ գաղտնի, սրբերի, հոգևորականների, գրքացների օգնությամբ: Գրքացները եռանկյունաձև մի փոքրիկ շորի մեջ դնում էին «գիր արված» թուղթը (ԽԵՆԵՍԻՄ), կապում տղայի մեջքին կամ թաղում աղջկա տան շեմի տակ: Շատ անգամ էլ գիր արված թուղթը ջրի մեջ ընկղմելով ջուրը խմեցնում էին աղջկան⁵¹: Այս ամենից հետո իր աղջիկը սկսում է համակրանք տածել տղայի նկատմամբ, ծնողները նույնպես մեղմանում էին և իբր այդ միջոցներով շահերը հասնում էին իրենց մուրազին, բախտին:

Ամփոփելով քրդերի նախամուսնական ընտրության պայմաններին ու ձևերին վերաբերող նյութերի քննությունը, կարելի է ասել, որ չունայած նահապետական կյանքի ընձեռած խիստ սահմանափակ հնարավորություններին, քրդերի մեջ դրանք բավական բազմազան են եղել: Դա, ըստ երևույթին, քրդերի (թե՛ մահմեդական և թե՛ եզդի) կենցաղի յուրատեսակ պայմանների հետևանք էր, որի լուսաբանումը դուրս է սույն հոդվածի խնդիրներից:

Սոցիալ-տնտեսական նոր առաջընթացը սովետական պայմաններում արմատական փոփոխություններ առաջացրեց Անդրկովկաս վերաբնակված քրդերի տնտեսամշակութային կյանքում: Հիմնովին փոխվեցին երիտասարդ աղջիկների ու տղաների շփման ու հարաբերությունների ոլորտները: Այժմ դրանք խարսխված են ազատ սիրո սկզբունքով ընտրություն կատարելու վրա:

Այդուհանդերձ, քրդերի արդի կենցաղում ու սովորույթներում, նոր սոցիալ-տնտեսական պայմաններում զգալիորեն վերափոխված ձևերով առկա ժողովրդական լավագույն ավանդույթների հետ միաժամանակ, տակավին դիտվում են անցյալից եկող և ժամանակակից ապրելակերպին անհարիր որոշ վերապրուկներ, որոնք հաղթահարման պրոցեսում են գտնվում:

М. Х. ДАРВЕШЯН

УСЛОВИЯ И ФОРМЫ ДОБРАЧНОГО ВЫБОРА У КУРДОВ АРМЕНИИ

Резюме

Вопросы, связанные с условиями и формами добрачного выбора у курдов, частично освещены в ряде работ по этнографии.

В статье на основании полевых материалов и литературы освещаются все основные моменты, связанные с добрачными условиями и формами выбора в среде курдов Армении. Социально-политические и культурные преобразования в жизни курдов Закавказья создали благоприятные условия для свободного выбора супружеских пар и создания здоровой семьи.

Ծ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Ա. Ավգալ, Քուրդ կիներ նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի, «Հայաստանի պետական պատմական թանգարանի աշխատություններ», հ. 1, Ե., 1948, էջ 239—242:
2. Т. Ф. Аристова, Курды Закавказья, М., 1965, с. 54.
3. Հոգվածը գրված է Հայկական ՍՍՀ քրդերի շրջանում 1980—1981 թթ. հեղինակի հավաքած դաշտային ազգագրական նյութերի (այսուհետև՝ ԴԱՆ) ու գրավոր աղբյուրների տվյալների հիման վրա:

4. Հ. Ասաֆյան, Քրդերը իրենց տանը, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. Բ, Թիֆլիս, 1898, էջ 152, Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 278—281, Курдские эпические песни-сказы (տեքստերի պատրաստում, առաջարան և ծանոթագրություններ՝ Հաջիկ Ջեդրի), Մ., 1962, էջ 10, Ж. С. Мусаян. Некоторые свадебные обряды в курдских народных песнях из рукописного собрания ГПБ, „Фольклор и этнография“, Л., 1974, с. 210.
5. С. А. Егиазаров, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, «Записки кавказского отделения Императорского Русского Географического общества», кн. XIII, вып. 2, 1891, с. 45: Հայաստանի մանկազան քրդերը Բնդարուկի փոխարեն օգտագործել են նաև «կավլի» (кавли) տերմինը, ի դեպ՝ նման բնույթի հավաքություններ հայանի են աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում՝ արևադարձային, հայերի, աշխիկների, կրդերների, ղազախների, ռուսների կենցաղից: Ш. Инал-Ипа, Очерки по истории брака и семьи у абхазов, изд. Абгиз, 1954, с. 50—100: Վ. Պետոյան, Ստանա ազգագրությունը, Ե., 1965, էջ 232—233, Գ. Ա. Հակոբյան, Ներքին Բանինի ազգագրությունը և բանահյուսությունը, Ե., 1974, էջ 181—182, Н. А. Кисляков. Семья и брак у таджиков, «Труды института этнографии», Новая серия, т. 44, М., 1959, с. 25—30; «Очерки по истории семьи и брака у народов Средней Азии и Казахстана», М., 1969, с. 65—70, С. А. Абрамзон, Некоторые стороны быта киргизской молодежи (XIX—XX вв.): «Семья и семейные обряды у народов Средней Азии и Казахстана», М., 1978, с. 106—116; Т. А. Бернштам, Девушка-невеста и предбрачная обрядность в Поморье в XIX—начале XX в., Русский народный свадебный обряд (под ред. К. В. Чистова и Т. А. Бернштам). Л., 1978, с. 48—64.
6. Мела Махмуд Баязиди, Нравы, обычаи курдов. М., 1965, с. 60—61.
7. С. А. Егиазаров, указ. соч., с. 45.
8. Գ. Ք. Նոգինյան, Մամ և Զինն (քրդական ժողովրդական գեղ), ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1905, էջ 212.
9. «Քրդական ֆոկլոր» (գրառում, թարգմանություն, առաջարան և ծանոթագրություն՝ Հ. Ջեդրի), Ե., 1947, էջ 71.
10. Э. Шамилов, Бэравок, Ер., 1963, с. 98—100: Մ. Խ. Դարվելյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), հ. 3, Ե., 1975, էջ 28—30.
11. Մ. Խ. Դարվելյան, ԴԱՆ, Անիի շրջան, 1981:
12. Մ. Խ. Դարվելյան, ԴԱՆ, Հոկտեմբերյանի շրջան, 1981:
13. Նրդի տերտեր հաղորդել է մայրս՝ Քուրարա Հուսեյնը (տե՛ս Մ. Խ. Դարվելյան, ԴԱՆ, 1980):
14. С. А. Егиазаров, указ. соч., с. 45.
15. Մ. Խ. Դարվելյան, ԴԱՆ, Թալինի, Մասիսի և Հոկտեմբերյանի շրջաններ, 1980—1981 թթ.:
16. Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 239: Մ. Խ. Դարվելյան, ԴԱՆ, Թալինի, Արագածի, Հոկտեմբերյանի, Մասիսի, Արարատի, էջմիածնի շրջաններ, 1980—1981 թթ.:
17. Э. Шамилов, նշվ. աշխ., էջ 137.
18. Э. Шамилов, նույն տեղում: Э. Э'вдал, Гблизор, Ереван, 1973, с. 8.
19. Մ. Խ. Դարվելյան, ԴԱՆ, Նաիրիի շրջան, 1981 թ.:

20. Ա. Ավդալ, Եշվ. աշխ., էջ 240:
21. Մ. Խ. Դարվեշյան, ԴԱՆ, էջմիածնի, Հոկտեմբերյանի շրջաններ, 1980—1981 թթ.:
22. Նմանվում է ավանդական Սողոմոն Իմաստունի կերպարին: Մ. Խ. Դարվեշյան, ԴԱՆ, Աշտարակի շրջան, 1981 թ.:
23. Մ. Խ. Դարվեշյան, ԴԱՆ, Երևան, 1980:
24. Ա. Ավդալ, Եշվ. աշխ., էջ 240:
25. Յ'. Шамилов, Бәрбәнг, Ереван, с. 1958; С. А. Егизаров, указ. соч., с. 46.
26. М. Б. Руденко, Новогодние обрядовые празднества у курдов. «Фольклор и этнография», Л., 1974, с. 119; Ахмеде Хани, Мам и Зипи (критический текст, перевод М. Б. Руденко). М., 1962, с. 72—74; Эюби, И. А. Смирнова. Курдский диалект Мукри. Л., 1968, с. 215.
27. Ахмеде Хани, указ. соч., с. 72—74.
28. Мела Махмуд Баязиди, Нравы и обычаи курдов. М., 1963, с. 34.
29. Մ. Խ. Դարվեշյան, ԴԱՆ, Թալինի շրջան 1980—1981 թթ.։ Ընդունված կարգ էր ջրի ուղարկել նորահարսներին ու աղջիկներին:
30. ԴԱՆ, Հոկտեմբերյանի շրջան, 1981 թ.:
31. Ш. Инол-Ипа, указ. соч., с. 24; Народы Кавказа, т. I, М., 1962, с. 197—210.
32. М. Mokri, Contribution scientifique aux études iraniennes, 1970, p. 42—43.
33. Мела-Махмуд Баязиди, указ. соч., с. 11.
34. Բախարը քրդերի մոտ հանդես է գալիս նաև այս իմաստով, երբ քրդերը դիմում էին որևէ մեկի օգնությանը, պաշտպանվելու նկատառումով (Мела Махмуд Баязиди, указ. соч., с. 11).
35. Այս տոներին նախորդում էր եզդի քրդերի մոտ 3-ական օր տևողությամբ պահը:
36. Մ. Խ. Դարվեշյան, ԴԱՆ, էջմիածնի շրջան, 1980:
37. Ա. Բ. Վարանդա, ԱՀ, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 250; Ե. Լալայան, Վարանդա, ԱՀ, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 252:
38. Յ'. Шамилов, Бәрәвок, с. 66: Մոմոն Խալըր (Դարվեշյան), Անդրկովկասի բլր-դերի անասնապահության հետ կապված հավատալիքները, «Լրաբեր հասարակական գիտությունների, 1977», № 7, էջ 77.
39. М. Mokri, p. 42.
40. К. Р. Эюби, И. А. Смирнова, указ. соч., с. 225.
41. Զրարան փոխօգնության միջոց է, որի ընթացքում բուրդ էին զգում, թել մանում, հարսի օժիտի համար գործվածք, գուլպա, ձեռնոց, խուրջին գործում:
42. Տարվա մեջ մի քանի անգամ (ոչ միայն) կանայք, հատկապես երիտասարդները, գնում էին հոսող ջրերի, գետակների ափը, լվանում բուրդը, անկողինը, շորերը և այլն: Հավաքված կանանց աշխատանքներին թարուն հետևում էին երիտասարդ տղաները, ընտրություն կատարելու նպատակով:
43. М. Mokri, p. 43.
44. Զ. Դ. Մառոյան, Քրդական բանահյուսության մշակումները սովետահայ գրականության մեջ, 1980, էջ 11—16:
45. «Курдские эпические песни-сказы», с. 10.
46. Ж. Мусаелян, указ. соч., с. 211.
47. «Քրդական ֆոլկլոր» (գրառումը, թարգմանությունը, առաջարկը և ծանոթագրությունները՝ Լ. Զեդիի), Երևան, 1977, էջ 61, 111, «Մամե և Զինե քրդական սիրա-

յին հերոսական վեպ» (2. Զեդիի թարգմանությունը), Ե., 1956, էջ 66, «h'ьk'ame шьмаэ'та к'орди'е'', գրառում, ծանոթություն 2. Զեդիի (Ереван, II, ր. 133).

48. «Քրդական ֆոլկլոր», 1947, էջ 34:

49. Տե՛ս նաև Ա. Ավդալ, Արյան վրեժխնդրությունը քրդերի մեջ և նրա մեացուկների վերացումը սովետական պայմաններում (Հայկական ՍՍՀ պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», № 4, 1952, էջ 231):

50. Э Шамилов, Бэрэвск, Ереван, 1969, с. 275—276; М. Махмуд Баязиди, указ. соч., с. 34; Э. Э'содал, Гблизэр, Ереван, 1973, с. 8.

51. Մ. Խ. Դաւիթյան, ԴԱՆ, Հոկտեմբերյանի շրջան, 1981: